

Մեծամոր համայնքի սիրելի բնակիչներ,

ավարտին է մոտենում դժվարություններով և մարտահրավերներով, բայց նաև նոր նախաձեռնություններով ու գաղափարներով, կյանքի կոչված ծրագրերով լեցուն ևս մեկ տարի:

2023 թվականը Մեծամոր համայնքի համար հազեցած էր հավակնոտ ծրագրերով: Այս մեկ տարվա ընթացքում մենք կյանքի կոչեցինք համայնքը զարգացնող բազմաթիվ աշխատանքներ: Մենք դրանք իրականություն դարձրինք՝ շնորհիվ բոլորիս աշխատանքի, շնորհիվ ձեր վստահության ու նվիրումի:

Համոզված եմ, որ այդ վստահությամբ ու նվիրումով աշխատելու ենք 2024-ին և եկող բոլոր տարիներին՝ նոր ձեռնարկումներ, նոր ծրագրեր կյանքի կոչելու, մեր բոլորի երազած ծաղկուն, մաքուր ու հարմարավետ համայնքը ստեղծելու համար: Գալիք տարին Մեծամոր համայնքի համար լինելու է շինարարական և մշակութային եռուզեռի տարի:

Ցավոք, ընթացիկ տարում ունեցել ենք նաև կորուստներ, որոնց համար խորապես ցավ ենք ապրում և վշտում: Արցախում տեղի ունեցած ցավալի իրադարձություններով պայմանավորված լծվեցինք մեր հայրենակիցների հավուր պատշաճի ընդունելու գործին:

Սակայն հավաստիացնում եմ՝ Մեծամոր համայնքում բնակություն հաստատած մեր արցախցի հայրենակիցները արագ կինտեգրվեն մեր համայնքի կենսագործունեության մեջ:

Տարեմուտի այս ժամերին մեր սրտերն ու հայացքները սահմաններում են, որտեղ մեր հայ զինվորները խրամատներում են դիմավորում Ամանորը՝ հսկելով մեր անդորրը: Թող Աստված օրհնի ու լավ աչքով նայի նրանց:

Մի րելի՛ բնակիչներ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Ամանորի և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ: Թող Նոր տարին միայն բարօրություն և խաղաղություն բերի մեր Հայրենիքին: Թող մեր ընտանիքներում այսուհետ միայն ավետիսներ հնչեն և թող մեր երեխաները մեծանան խաղաղ երկնքի տակ: Թո՛ղ 2024 թվականը միայն ձեռքբերումների և բարի գործերի իրականացման տարի լինի:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ ծնունդ: